«ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ աշխարհագրության (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչեւ սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին, Հնաբերդի Ե. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ծաղկահովիտ համայնք, Հնաբերդ բնակավայր, 1-ին փողոց, շենք՝ 1:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 094 62-48-74: